

## Արձանագրություն 4

2021 թվականի հուլիսի 6-ին տեղի ունեցավ ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի 10-րդ Բ դասարանի ծնողական ժողովը: Ժողովին ներկա էին բոլոր ծնողները: Ժողովը վարում էր դասդեկ Լուիզա Աղաբաբյանը:

### ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

- 2-րդ կիսամյակի և տարեկան արդյունքների ամփոփում.
  - ա) ուսման առաջադիմությունը
  - բ) տարեվերջյան դասագրքի հանձնման արդյունքները
- Տարեվերջյան էքսկուրսիա կազմակերպելու հարցը:

1. Լսեցին. - 2-րդ կիսամյակի և տարեկան արդյունքների ամփոփման հարցը:

Ելույթ ունեցավ դասդեկ Լուիզա Աղաբաբյանը՝ իր խոսքում նշելով, որ չնայած այս ուսումնական տարին լի էր բարդություններով, սակայն աշակերտները կարողացան հաղթահարել համավարակով և պատերազմով պայմանավորված խնդիրներն ու պատվով ավարտել 2020-2021 ուստարին: Դասդեկը մեկ առ մեկ ներկայացրեց յուրաքանչյուր աշակերտի առաջադիմությունը՝ ծնողներին բաժանելով նրանց ամփոփաթերթիկները: Այսպիսով, ամփոփելով 2-րդ կիսամյակի և տարեկան արդյունքները, նա նշեց, որ դասարանում կա չորս գերազանց առաջադիմությամբ աշակերտ՝

1. Բաղայան Լուսինե
2. Բաղայան Մերի
3. Թարոյան Իրինա
4. Պետրոսյան Անի և հինգ հարվածային աշակերտ:

Դասարանը ցուցաբերել է 100% առաջադիմություն, որակական ցուցանիշը՝ 45%, բացակայությունը կազմել է 47 ժամ:

Դասդեկը նաև տեղեկացրեց, որ դասարանի բոլոր աշակերտները դասագրքերը հանձնել են լավ վիճակում:

Որոշեցին.-

Ի գիտություն ընդունել դասարանի ղեկավարի ներկայացրած տարեկան գնահատականների ու 2020-2021 ուստարում կատարված աշխատանքները: Ուսուցիչների ու դասդեկի աշխատանքը գնահատել գերազանց՝ 100% արդյունավետություն ապահովելու համար:

2. Լսեցին. - Տարեվերջյան էքսկուրսիա կազմակերպելու հարցը:

Դասդեկ Լուիզա Աղաբաբյանը նշեց, որ իրեն են դիմել բազմաթիվ ծնողներ՝ տարեվերջյան էքսկուրսիա կազմակերպելու հարցով: Դասդեկը երբեք դեմ չի եղել նման միջոցառումներին՝ էքսկուրսիաներին, թատրոն, կինո, մշակույթի օջախներ այցելություններին: Դրանք հետապնդում են կոնկրետ նպատակներ, նպաստում են աշակերտների ազատ շփմանը,

միջանձնային կորմալ հարաբերությունների ձևավորմանը, ֆիզիկական, գեղագիտական և հայրենագիտական գիտելիքների զարգացմանը:

Խոսելով էքսկուրսիաների կարևորության մասին՝ Լուիզա Ադաբաբյանը կարևորեց

հատկապես նման միջոցառումների կազմակերպման պատասխանատվությունը՝



էքսկուրսիաները կազմակերպել հուսալի, անվտանգ տրանսպորտային միջոցով:

Գումարային խնդիրները պետք է կազմակերպվեն և լուծվեն բացառապես ծնողական խորհուրդների կողմից՝ առաջնորդվելով նվազագույն գումարներով՝ անհրաժեշտ ծախսեր անելու:

Դասղեկը և ծնողները պետք է վերահսկեն և համակարգեն էքսկուրսիաներ կազմակերպելու աշխատանքները:

Որոշեցին.-էքսկուրսիա կազմակերպել դեպի Լոռի/ Դսեղ, Թումանյանի տուն-թանգարան, Սանահին և Հաղպատ/ և իրականացնել՝ առաջնորդվելով բացառապես ծնողների և աշակերտների առաջարկություններով, համաձայնությամբ և մասնակցությամբ:Այս նպատակով հավաքագրել 10 000- ական դրամ:

Ժողովի նախագահ  
Քարտուղար՝

 (Ար. Հարությունյան )  
 (Լ. Հովհաննիսյան )